ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

# ՈՐՈՇՈՒՄ
## Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/1091/02/24 ք. Երևան
11 Մարտի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր դատավոր **Ա. Թումասյանը** (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/122-3» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 26.12.2023թ. որոշումը և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 09.01.2024թ. 49-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

## ՊԱՐԶԵՑ

«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արամ Հովհաննիսյանը 12.02.2024 թվականին էլեկտրոնային եղանակով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/122-3» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 26.12.2023թ. որոշումը և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 09.01.2024թ. 49-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 16.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը կից փաստաթղթերով վերադարձվել է:
Հայցադիմումը 21.02.2024 թվականին կրկին ներկայացվել է Դատարան:
Դատարանի 27.02.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը կից փաստաթղթերով վերադարձվել է:
Հայցադիմումը 04.03.2024 թվականին կրկին ներկայացվել է Դատարան, իսկ դատավոր Ա.Թումասյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 06.03.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
...,
5. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ՝ որոշումն անհապաղ ուղարկելով լիազորված մարմնին՝ Երևանի քաղաքապետարանին:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/122-3» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի լուծելու մասին 26.12.2023թ. որոշումը և «ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի 09.01.2024թ. 49-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով՝ դատական ակտի հրապարակման օր սահմանելով 2024 թվականի ապրիլի 22-ը՝ դատական իշխանության պաշտոնական կայքի (www.datalex.am) միջոցով:
3. Որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:
4. Որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Արմինե Թումասյան**

Digitally signed by
ARMINE TUMASYAN 7111860578
Date: 2024.03.11 14:50:42 mID

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*